



Կարգապահական գործ թիվ ԿԳ-19236

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020թ-ի հուլիսի 7-ի թիվ 75-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/62-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՏԱԿ ԽԱԶԻԿՅԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ խորհրդի անդամ Հրանտ Անանյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի և Կարեն Մեժլումյանի կազմով,
քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,
քննության առնելով փաստաբան Արտակ Խաչիկյանի (արտոնագիր՝ թիվ 779), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

30.09.2019թ-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում մուտքագրվել է Կարինե Մարկոսյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմումը, որում հայտնվել է հետևյալը.

Դիմողը փաստաբան Արտակ Խաչիկյանի (**այսուհետ՝ նաև Պատասխանող**) հետ կնքված պայմանագրով նրան վճարել է 150,000 ՀՀ դրամ, որպեսզի վերջինս ներկայացնի իր շահերը թիվ ՏԴ/0594/02/17 քաղաքացիական գործով: Գումարն ստանալուց հետո Պատասխանողը Դիմողի համար կազմել է հայցադիմում և մեկ անգամ մասնակցել է դատական նիստի, որից հետո իր պարտավորությունները պատշաճ ձևով չի կատարել:

Ըստ Դիմողի՝ այնուհետև վերջինս դիմել է Պատասխանողի կնոջը՝ փաստաբան Սուսաննա Սիրադեղյանին, որպեսզի նրանք կա՛մ հետ վերադարձնեն Դիմողի կողմից վճարված 150,000 ՀՀ դրամ գումարը, կա՛մ Սուսաննա Սիրադեղյանը դատարանում շարունակի Պատասխանողի կիսատ թողած գործը: Փաստաբան Սուսաննա Սիրադեղյանը համաձայնվել է և մասնակցել է մեկ դատական նիստի, որը հետաձգվել է՝ փաստաթղթերին ծանոթ չլինելու պատճառաբանությամբ, ինչից հետո հրաժարվել է Դիմողին պատշաճ

իրավաբանական օգնություն տրամադրելուց:

Դիմողը նշել է, որ ինքը ցանկանում է դատական քննության ընթացքում իր կատարած ծախսերը ներկայացնել դատարան՝ դրանք դատական ծախսերի մեջ ընդգրկելու նպատակով և, թեև դժվարությամբ, Պատասխանողից և վերջինիս կնոջից կարողացել է ստանալ իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիրը, սակայն նրանք հրաժարվում են ներկայացնել վճարման անդորրագիր կամ այլ փաստաթուղթ, որը կհաստատեր Դիմողի կողմից համապատասխան ծառայություններ մատուցելու համար վճարումը կատարված լինելու հանգամանքը:

Դիմումին կից, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացվել է նաև Արտակ Խաչիկյանի հետ կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի և Դիմողի կողմից փաստաբան Արտակ Խաչիկյանին ուղղված դիմումի և համապատասխան փոստային հետստացման անդորրագրի պատճենները:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 30.10.2019թ. թիվ 464-Ա/ԿԳ-19236 որոշմամբ փաստաբան Արտակ Խաչիկյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Պալատի փաստաբանների ընդհանուր ժողովի 11.12.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված խմբագրությամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 2.6.1 (Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Նոր կանոնագիրք**) 2.6.1 ենթակետ), 2.7.2 (Նոր կանոնագրքի 2.7.2 ենթակետ), 3.1.8 (Նոր կանոնագրքի 3.1.8 ենթակետ), 3.5.5 (Նոր կանոնագրքի 3.5.5 ենթակետի «դ» պարբերություն) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Մարինե Թովմասյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել: 02.03.2020թ.-ին Պալատում մուտքագրվել է Դիմողի «Գրավոր բացատրություն» վերտառությամբ գրությունը, որում հայտնվել է հետևյալը:

Դիմողը 10.06.2017թ.-ին Պատասխանողին տվել է հասարակ գրավոր ձևի լիազորագիր, իսկ 03.05.2019թ.-ին հասարակ գրարովր ձևի լիազորագիր է տվել Դիմողի կնոջը՝ փաստաբան Սուսաննա Սիրադեղյանին:

Ըստ Դիմողի՝ Պատասխանողն իրեն չի տրամադրել պայմանագրի օրինակը և իրեն վճարված գումարի՝ 150,000 ՀՀ դրամի վճարման վերաբերյալ որևէ փաստաթուղթ:

Դիմողը 19.06.2017թ.-ին դատարան է ներկայացրել հայցադիմում, որը դատարանի կողմից 22.06.2017թ.-ին ընդունվել է վարույթ, և գործին տրվել է ՏԴ/0594/02/17 համարը:

Առաջին նախնական դատական նիստ է նշանակվել 08.08.2017թ-ին, որին Դիմողը և Պատասխանողը՝ որպես Դիմողի ներկայացուցիչ, մասնակցել են:

Դիմողն ու Պատասխանողը՝ որպես Դիմողի ներկայացուցիչ, մասնակցել են նաև 10.10.2017թ-ին, 14.11.2017թ-ին և 13.12.2017թ-ին նշանակված դատական նիստերին:

13.12.2017թ-ի դատական նիստին դատարանը կայացրել է որոշում փորձաքննություն նշանակելու վերաբերյալ և կասեցրել է գործի քննությունը: Դրանից հետո Պատասխանողը հրաժարվել է վարել Դիմողի գործը և Դիմողին տրամադրել իրավաբանական խորհրդատվություն, չի պատասխանել Դիմողի բազմաթիվ հեռախոսազանգերին և չի ներկայացել իր աշխատավայր:

Դատարանի 10.01.2019թ-ին կայացված որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է, և հերթական դատական նիստը նշանակվել է 13.03.2019թ-ին, որը չի կայացել նախագահող դատավորի՝ հերթական արձակուրդում գտնվելու հիմքով, և հաջորդ դատական նիստը նշանակվել է 14.05.2019թ-ին:

Դիմողը դիմել է Պատասխանողի կնոջը՝ փաստաբան Սուսաննա Սիրադեղյանին իր կողմից Պատասխանողին վճարված գումարը վերադարձնելու կամ Պատասխանողի կիսատ թողած գործը շարունակելու խնդրանքով: Սուսաննա Սիրադեղյանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ վերջինս կվարի Դիմողի գործը, և 03.05.2019թ.-ին Դիմողը Սուսաննա Սիրադեղյանին տվել է հասարակ գրավոր ձևի լիազորագիր:

14.05.2019թ-ին Դիմողը փաստաբան Սուսաննա Սիրադեղյանի՝ որպես իր ներկայացուցչի հետ մասնակցել է դատական նիստին:

Դրանից հետո, երբ Դիմողը պահանջել է իրեն տրամադրել որևէ փաստաթուղթ իրենից գումար ստանալու վերաբերյալ, որպեսզի ինքը կարողանա իր ծախսերը ներկայացնել դատարանին, փաստաբան Սուսաննա Սիրադեղյանը ևս հրաժարվել է իր գործը վարելուց և իրեն իրավաբանական խորհրդատվություն տրամադրելուց, չի պատասխանել իր հեռախոսազանգերին և իրենից խուսափել է:

Ըստ Դիմողի՝ Պատասխանողի և փաստաբան Սուսաննա Սիրադեղյանի կողմից Դիմողի գործի վարումից և Դիմողին իրավաբանական ծառայություն մատուցելու պարտավորությունից միակողմանիորեն հրաժարվելու, դատական նիստերն անհարկի հետաձգելու և դատարանին ամբողջական փաստաթղթեր չներկայացնելու պատճառով Դիմողն ստիպված է եղել դիմել այլ փաստաբանների և իրավաբանների իր գործը վարելու համար և կատարել է լրացուցիչ ծախսեր:

Դիմողը գտել է, որ Պատասխանողն ու փաստաբան Սուսաննա Սիրադեղյանը պարտավոր են իրեն վերադարձնել իր կողմից վճարված 150,000 ՀՀ դրամ գումարը և հատուցել իրենց պատճառով Դիմողի կրած բոլոր վնասները:

Դիմողը Խորհրդի նիստին չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել էր նիստի օրվա, ժամի և վայրի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Պատասխանող Արտակ Խաչիկյանից դիմումի վերաբերյալ պահանջվել է գրավոր բացատրություն, սակայն վերջինիս կողմից բացատրություն չի ներկայացվել:

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողի կողմից ներկայացվել է բացատրություն, որում հայտնվել է հետևյալը:

Պատասխանողն ընդունել է, որ Դիմողի դիմումում նշված քաղաքացիական գործով Դիմողին ցույց է տվել իրավաբանական օգնություն: Դիմողը պնդում է, որ այդ իրավաբանական օգնությունը Դիմողին տրամադրել է ժամանակին և ջանասիրաբար ներկայացրել է Դիմողի շահերը:

Ըստ Պատասխանողի՝ վերջինս Դիմողի հետ իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել 2017թ.-ին և պայմանագրի մեկ օրինակը հանձնել է Դիմողին:

Պատասխանողի պնդմամբ՝ վերջինիս կողմից նախապատրաստվել է Դիմողի գործը, կազմվել է հայցադիմում և ներկայացվել դատարան: Ըստ նախնական պայմանավորվածության՝ Դիմողին նշված ծառայությունների մատուցումից հետո գործի վարումը Պատասխանողի կողմից շարունակելու դեպքում պայմանագրում նշված վճարը պետք է վերանայվեր:

Ըստ Պատասխանողի՝ վերջինս մասնակցել է 08.08.2017թ.-ի, 10.10.2017թ.-ի, 14.11.2017թ.-ի և 13.12.2017թ.-ի կայացած դատական նիստերին: 12.12.2017թ.-ին Պատասխանողի միջնորդությամբ դատարանի որոշմամբ նշանակվել է գույքը բնեղենով բաժանելու դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, և գործի վարույթը կասեցվել է: 10.01.2019թ.-ին դատարանի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է, և գործի քննությունը նշանակվել է 13.03.2019թ.-ին, որին Պատասխանողը մասնակցել է: Մյուս 3 դատական նիստերին մասնակցել է Պատասխանողի կինը՝ փաստաբան Սուսաննա Սիրադեղյանը:

Պատասխանողը գտել է, որ դիմումն անհիմն է և խնդրել է այն թողնել անհետևանք:

Պատասխանողը Խորհրդի նիստին ներկայացել և ըստ էության վերահաստատել է նախկինում ներկայացրած իր դիրքորոշումը:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 08.01.2020թ.-ին կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերն առարկություններ չեն ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 16.01.2020թ.-ին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 07.07.2020թ.-ին ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը:

- Պատասխանող Արտակ Խաչիկյանը հանդիսացել է թիվ SԴ/0594/02/17 քաղաքացիական գործով Դիմող Կարինե Մարկոսյանի վստահորդը: Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությամբ և Դիմողի և Պատասխանողի միջև կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենով:

- Թիվ SԴ/0594/02/17 քաղաքացիական գործով 19.06.2017թ.-ից մինչ 06.02.2020թ. տեղի է ունեցել դատական 7 նիստ (որոնցից սույն կարգապահական գործին վերաբերելի է 6-ը), որոնցից 4-ին մասնակցել է Պատասխանողը, իսկ 1-ին՝ փաստաբան Սուսաննա Սիրադեղյանը: Նշված փաստը հաստատվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատարանի աշխատակազմի 06.02.2020թ.-ի թիվ ԴԴ-29-Ե գրությամբ և դրան կից ներկայացված դատական նիստերի թղթային արձանագրությունների պատճեններով, ինչպես նաև Դիմողի «Գրավոր բացատրություն» վերտառությամբ գրությամբ և Պատասխանողի բացատրությամբ:

- 12.12.2017թ.-ին Պատասխանողի միջնորդությամբ դատարանի որոշմամբ նշանակվել է գույքը բնեղենով բաժանելու դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, և գործի վարույթը կասեցվել է: Նշված փաստը հաստատվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատարանի աշխատակազմի 06.02.2020թ.-ի թիվ ԴԴ-29-Ե գրությանը կից ներկայացված դատական նիստերի թղթային արձանագրությունների պատճեններով, «Դատալեքս» տեղեկատվական համակարգից արված քաղվածքով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղականքի համաձայն՝ Արտակ Խաչիկյանը փաստաբան է հանդիսանում 19.10.2007թվականից, 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 2 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

Պալատի Խորհրդի 03.10.2016թ. թիվ ԿԳ/94-Ա որոշմամբ Արտակ Խաչիկյանի նկատմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով հարուցված

կարգապահական վարույթը կարճվել է՝ վերջինիս նկատմամբ արտոնություն կիրառելու հիմքով:

Պալատի խորհրդի 10.12.2019թ. թիվ ԿԳ/178-Ա որոշմամբ Արտակ Խաչիկյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ խիստ նկատողության Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 ենթակետերի խախտման համար, և տույժը մարված չէ:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արտակ Խաչիկյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.6.1, 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հիմքով կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Կանոնագրքի 2.6.1 ենթակետի համաձայն՝ օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի նպատակավոր շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պարճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է

ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ փալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի մասնագիտական բարեխղճությունն իր վստահորդի նկատմամբ փաստաբանի՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձի կարգավիճակի առանցքային տարրերից է: Վերջինս ներառում է փաստաբանի ազնիվ և օրինապահ վարքագիծն իր վստահորդի շահերը ներկայացնելիս և պաշտպանելիս: Դա նշանակում է, որ փաստաբանը դատավարության բոլոր փուլերում կրում է ինչպես պոզիտիվ պարտականություն՝ իր վստահորդին որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալ օրենքով չարգելված բոլոր միջոցներով, այնպես էլ նեգատիվ պարտականություն՝ չկատարել այնպիսի գործողություններ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կվնասեն վստահորդին, նրա իրավունքներին և օրինական շահերին:

Սույն համատեքստում Խորհուրդը գտնում է, որ դատական նիստերին փաստաբանի մասնակցելը՝ որպես վստահորդին մատուցվող փաստաբանական ծառայության բարեխղճության չափանիշ, չպետք է քննարկվի ինքնանպատակ, և պետք է հաշվի առնվեն նաև վստահորդի գործի բնույթն ու առանձնահատկությունները, փաստաբանի կողմից մարտավարության ընտրության ազատությունը, տվյալ դատական նիստում դատարանի կողմից լուծվելիք հարցերը և փաստաբանի մասնակցության նպատակահարմարությունը, դատական նիստերից փաստաբանի բացակայության հարգելի բնույթը, փաստաբանի կողմից վստահորդի օգտին կատարված դատավարական գործողությունները, ինչպես նաև ուշադրության արժանի և վերաբերելի այլ հանգամանքներ: Միայն վերոնշյալի համալիր քննարկման ու վերլուծության արդյունքում է հնարավոր որոշել, թե արդյոք որոշ դատական նիստերի փաստաբանի բացակայությունը Կանոնագրքի դրույթների խախտում է, թե՛ ոչ: Ընդ որում, փաստաբանի մասնագիտական վարքագծի վերոնշյալ չափանիշների օբյեկտիվ և բազմակողմանի քննության համար ապացույցների անբավարարության բացասական հետևանքը պետք է կրի այդ ապացույցները ներկայացնելու պարտականություն ունեցող կողմը:

Տվյալ դեպքում Դիմողը Պատասխանողին մեղադրում է նրանում, որ վերջինիս հետ կնքված պայմանագրով նրան վճարել է 150,000 ՀՀ դրամ, սակայն Պատասխանողը պատշաճ չի կատարել իր վրա դրված պարտականությունները, այն է՝ որպես փաստաբան պատշաճ կերպով հանդես չի եկել դատարանում, ինչպես նաև հրաժարվում է ներկայացնել վճարման անդորրագիր կամ այլ փաստաթուղթ, որը կհաստատեր իր կողմից համապատասխան ծառայություններ մատուցելու համար վճարումը կատարած լինելու հանգամանքը, ինչի հիման վրա ինքը դատարանում կկարողանար ստանալ դատական ծախսերի փոխհատուցում:

Խորհուրդը գտնում է, որ Դիմողը Պատասխանողին և նրա կնոջը՝ փաստաբան Սուսաննա Սիրադեղյանին ընկալել է որպես փոխկապակցված անձանց, ինչի մասին է վկայում նաև դիմումի բովանդակությունը և Սուսաննա Սիրադեղյանին տված

լիազորագիրը: Հետևաբար, Պատասխանողին մատուցված իրավաբանական ծառայության բարեխղճությունը գնահատելիս պետք է Պատասխանողի և նրա կնոջ՝ Սուսաննա Սիրադեղյանի գործողությունները դիտարկել միասնության մեջ՝ որպես Դիմողին մատուցված մեկ ընդհանուր փաստաբանական ծառայություն:

Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ թիվ SԴ/0594/02/17 քաղաքացիական գործով նախքան դիմումը Պալատում մուտքագրվելը՝ 30.09.2019թ.՝ տեղի է ունեցել դատական 6 նիստ, որոնցից 4-ին՝ 08.08.2017թ.-ին, 10.10.2017թ.-ին, 14.11.2017թ.-ին և 13.12.2017թ.-ին կայացած դատական նիստերին մասնակցել է Պատասխանողը, իսկ 1-ին՝ 14.05.2019թ.-ին կայացած դատական նիստին՝ Պատասխանողի կինը՝ փաստաբան Սուսաննա Սիրադեղյանը:

Խորհուրդը հաշվի է առնում, որ Պատասխանողը, Դիմողի հետ կնքելով իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, Դիմողի օգտին իրականացրել է իրավաբանական օգնություն հանդիսացող մի շարք գործողություններ. ուսումնասիրել է Դիմողի գործի նյութերը, կազմել է հայցադիմում, որը դատարանի կողմից ընդունվել է վարույթ, մասնակցել է նախքան դիմումը Պալատում մուտքագրվելը տեղի ունեցած 6 դատական նիստերից 4-ին, դատարան է ներկայացրել փորձաքննություն նշանակելու միջնորդություն, որը դատարանի կողմից բավարարվել է, և գործի վարույթը կասեցվել է, ևս մեկ դատական նիստի մասնակցել է Պատասխանողի կինը՝ փաստաբան Սուսաննա Սիրադեղյանը: 03.09.2019թ.-ին նշանակված դատական նիստը հետաձգվել է հակառակորդ կողմի միջնորդությամբ, ով ևս դատական նիստին չէր ներկայացել:

Խորհուրդը գտնում է, որ տեղի ունեցած 6 դատական նիստերից 2-ին Պատասխանողի չմասնակցելը, այլ թույլատրելի և վերաբերելի արժանահավատ ապացույցների բացակայության պայմաններում, չի կարող համարվել Դիմողին ոչ բարեխիղճ փաստաբանական ծառայության մատուցում՝ հատկապես հաշվի առնելով, որ այդ 2 նիստերից մեկին որպես Դիմողի ներկայացուցիչ մասնակցել է փաստաբան Սուսաննա Սիրադեղյանը: Միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ Դիմողի կողմից չի ներկայացվել Պատասխանողի կողմից Դիմողին ոչ բարեխիղճ փաստաբանական ծառայության մատուցման այլ ապացույց:

Նման պայմաններում, կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ հոդվածի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 30.10.2019թ. թիվ 464-Ա/ԿԳ-19236 որոշմամբ փաստաբան Արտակ Խաչիկյանի (արտոնագիր՝ թիվ 779) նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրի 2.6.1,

2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտման հարկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

**ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝**

Հրանտ Անանյան

**07 հուլիսի 2020թ.
թիվ ԿԳ/62-Ա
ք. Երևան**